ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 173

25 մարտի 2025 թվականի N – Ա

«ԿԱՊԱՆԻ Ա.ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ԱՆՎԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻՆ, ՆԿԱՐԻՉ ԱՐԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ կետով և համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2002 թվականի հունվարի 21-ի «Սյունիքի մարզպետի խրախուսանքի ձևեր հաստատելու մասին» N 7-Ա որոշմամբ հաստատված կարգի

ո ր ո շ ու մ ե մ.

1. Սյունիքի մշակութային կյանքում ունեցած մեծ վաստակի, դերասանական արվեստում երկարամյա գործունեության, «Կապանի Ա.Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 90-ամյակի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի շնորհակալագրով պարգևատրել «Կապանի Ա.Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության դերասաններին՝ համաձայն հավելվածի:
2. Սյունիքի մշակութային ժամանակակից կյանքում ներդրած ջանքի, թատերական արվեստում նորարարական մոտեցումների համար, «Կապանի Ա.Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 90-ամյակի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի շնորհակալագրով պարգևատրել նկարիչ Արեն Հայրապետյանին:

Recoverable Signature

X

Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

2025թ. մարտի 25
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
«25» մարտի 2025թ.
N 173 - Ա որոշման

Անվանացանկ

Սյունիքի մշակութային կյանքում ունեցած մեծ վաստակի, դերասանական արվեստում երկարամյա գործունեության, «Կապանի Ա.Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոնի» պետական ոչ առևտրային կազմակերպության 90-ամյակի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի շնորհակալագրով պարգևատրվող «Կապանի Ա.Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության դերասանների

Հ/հ	«Կապանի Ա.Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության դերասաններ
1	Նատալյա Բաղդասարյան
2	Արտավազդ Գրիգորյան
3	Աիդա Սահակյան
4	Մարիետա Քոչարյան
5	Գայանե Զախարյան

Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար՝ Է.Մարտիրոսյան